Մյունխեն.
վերջին կայարան

BookMark

RIMA KHACHATRYAN

MUNICH: THE TERMINUS

A True-Life Story

РИМА ХАЧАТРЯН

МЮНХЕН: КОНЕЧНАЯ СТАНЦИЯ

История одной жизни

YEREVAN | ЕРЕВАН
2021

BookMark

Ռիմա Խաչատրյան

Մյունխեն. վերջին կայարան

Մի կյանքի պատմություն

Երկրորդ հրատարակություն

ԵՐԵՎԱՆ
2021

BookMark

ՀՏԴ 377:61:82-94
ԳՄԴ 74.56+5
Խ 282

Խ 282 Խաչատրյան Ռ.
Մյունխեն. վերջին կայարան/ Ռ. Խաչատրյան.- Եր.: Newmag, 2021.- 200 էջ:

«Մյունխեն. վերջին կայարան» հուշապատումը վերջին հանգրվան հասնող մի կյանքի պատմություն է՝ հիմնված իրական դեպքերի ու ժամանակի նշանակալի իրադարձությունների վրա:

Այն արտացոլում է հայաստանցու կենցաղն ու մտորումներն անցած դարի երկրորդ կեսին և վերջին երկու տասնամյակում:

Ամբողջությամբ հագեցած է աշխատավոր մարդու հոգեբանությամբ ու իմաստնությամբ: Գործող անձինք միմյանցից տարբերվում են բնավորությամբ, խառնվածքով, աշխարհայացքով, իրականության նկատմամբ վերաբերմունքով:

Գրքում տեղ են գտել նաև մտացածին մոտիվներ ու միջադեպեր, հավաքական կերպարներ, որոնք, սակայն, էապես չեն ազդում պատումի ընթացքի վրա և ենթակա են ընդհանուր իրապատում տրամաբանությանը:

ՀՏԴ 377:61:82-94
ԳՄԴ 74.56+5

ISBN 978-9939-884-12-7
Մյունխեն. վերջին կայարան © Ռիմա Խաչատրյան , «Նյու Մեգ» ՍՊԸ
Այս գրքի հեղինակային բոլոր իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին:

Բովանդակություն

Նախաբան 7

Գլուխ 1 «Մարդու սիրտը լեն ընի» կամ ստալինյան կոմունալկան ու Խրուշչովի վոլյունտարիզմը 11

Գլուխ 2 Մահափորձի վարկածն ու սերժանտ Զացեպիլովի սխրանքը 27

Գլուխ 3 «Չին մուրազ ա, ճախրող աղավնին՝ խաբար» 45

Գլուխ 4 Չեղած տեղից նաֆարին կշտացնելու հունարը 53

Գլուխ 5 Գվարներիի ջութակն ու կոմունալ բնակարանի օբիսկը 63

Գլուխ 6 Ուշացած հատուցում կամ 37 թվի լլկող արձագանքը 83

Գլուխ 7 Պարտիայի շառն ու պրոֆսայուզի խերը 89

Գլուխ 8 Էպոնժի մի ատրեզն ու սոցիալիզմի յոթ հակասությունները 99

Գլուխ 9 Ցարի կազարմեքն ու վարպետ Աբգարի չարագույժ կանխատեսումը 117

Գլուխ 10 Միոտ բուրժույական ու կոմունալկայի մոռացված հմայքը 131

Գլուխ 11 Վանեցու պապենական ոսկին ու Ռոքֆելլերի առաջին միլիոնը 143

Գլուխ 12 ՕՏԿ Լյուբան կամ խորտակված անուրջներ 155

Վերջաբան 167

Գրքում հիշատակված անձինք 171

Գրքում հիշատակված տեղանունների ցանկ 187

Գրքում հիշատակված հաստատությունների ցանկ 195

BookMark

BookMark

Նախաբան

BookMark

«Մյունխեն. վերջին կայարան» հուշապատումը Եվրոպայի երկաթուղային մայրուղիներով մի ճամփորդության նկարագրություն է, որ զուգորդված է վերջին հանգրվան հասնող մի կյանքի պատմությամբ: Երկու ճանապարհ, մեկ վերջնակետ, մեկ պատմություն:

Ավստրոգերմանական մերօրյա իրականությունը և վերջին երկու տասնամյակների ու անցած դարի երկրորդ կեսի հայաստանցու կյանքն ու մտորումներն անցնում են մեկ անհատի պրիզմայով՝ ժամանակ, հասարակարգեր, փոփոխվող բարքեր ու պատմական իրադարձություններ, որոնք կտրում-անցնում է անհատի ճակատագիրը:

Եվ որքան էլ տրամաբանական թվա, թե դարաշրջաններն ու հասարակարգերը գերակա են մարդկային վարքագծի հանդեպ, այս մի կյանքի պատմությունը նրբորեն ապացուցում է, որ անհատի անձնական առաքինությունները կարող են անփոփոխ ու առաջնորդող լինել 1950-ականների խորհրդային կոմունալկայից մինչև մերօրյա «Մյունխենբահն»:

Ժամանակի ու տարածության մեջ միջավայրի ալիքների վրա տարուբերվել՝ ստանալով շրջապատի գույնն ու տատանման աստիճանը, թե՞ բոլոր ալեկոծությունները

հաղթահարել հանդարտ ու կայուն արագությամբ. այս երկընտրանքը կարմիր թելի պես ձգվում է մեկ մարդու աննկատ, բայց հաստատուն ընթացքի մասին այս պատմության միջով:

Ժամանակի առանցքային, հաճախ դարակազմիկ դեպքերը նկարագրված ու մեկնաբանված են պարզ մարդու տեսանկյունից, առանց ավելորդ պերճության, այնպես, ինչպես ժողովուրդն է ընկալում:

Շարադրանքին բնորոշ է պարզ հոգեբանությամբ կյանքի անցուդարձն իմաստավորելու և ներկայացնելու ձգտումը:

Գրքում հանդիպող բոլոր կերպարներն իրական մարդիկ են, հայտնվում են իրական միջավայրերում: Որոշ անուններ փոխված են: Կան նաև հավաքական կերպարներ, որոնք ստեղծված են ընթերցողին չծանրաբեռնելու և նյութն առավել «դյուրամարս» դարձնելու համար:

BookMark

BookMark

ԳԼՈՒԽ 1

«Մարդու սիրտը լեն ըլնի» կամ ստալինյան կոմունալկան ու Խրուշչովի վոլյունտարիզմը

BookMark

2020 թվականի մարտի 2-ն էր: Վաղ առավոտ էր: Լազուրե երկինքը, ուր ամպի նշույլ անգամ չէր երևում, փաք, լուսավոր ու արևոտ օր էր խոստանում:

Անհամբեր ուղևորները, որ իրենց գնացքի մեկնումից շուտ էին հասել կայարան, կառամատույցների նստարանների վրա նստոտած՝ հետևում էին, թե սպվերներն ինչպես են կարճանում:

Քաղաքը դեռ չէր արթնացել, բայց Վիեննայի երկաթուղային կայարանում արդեն եռուզեռ էր:

Ճամպրուկների անիվների խզզոցը, շչակների սուլոցը, լոկոմոտիվների կարկաչյունը, ժամանող գնացքների դղրդյունն ու գնացքից ուշացողների գոռգոռոցը, միախառնվելով մեղվափեթակ հիշեցնող ընդհանուր գվվոցին, մի յուրատեսակ իրարանցում էին առաջացնում, կայարանային իրարանցում, որ քաջ ծանոթ է ամեն մի ճանապարհորդի:

Բայց քաոս չկար: Մեծաթիվ մարդկանց՝ առաջին հայացքից բրոունյան թվացող շարժումն ուներ հստակ նախանշված ուղղություններ ու ներքին կրամաբանություն:

Կառամատույցից կառամատույց վազող մարդիկ մի պահ կանգ էին առնում հսկայական ինֆորմացիոն ցուցատախտակի առջև, կկոցած աչքերով որոնում էին իրենց գնացքի համարն

ու, ավելորդ անգամ հավաստիանալով, որ ընտրված ուղղությունը ճիշտ է, շարունակում էին իրենց սրընթաց քայլքը...

...Շարժասանդուղքով մոտեցան առաջին կառամատույցին: Կարմիր-մոխրագույն արագընթաց գնացքն արդեն կանգնած էր կառամատույցի մոտ:

– Մեր տեղերը ո՞ր վագոնում են,– հարցրեց Մարինեն:

– Երկրորդ,– լսվեց եղբոր պատասխանը,– սեկտոր Բ:

– Վա՛յ, մենք հենց երկրորդ վագոնի մոտ ենք,– ուրախ բացականչեց Մարինեն:

Բարձրացան վագոն, տեղավորվեցին հարմարավետ բազկաթոռներին:

Լսվեց սլաքավարի սուլիչի ձայնը: Գնացքը շարժվեց: Վագոնի սրահում տեղադրված բարձրախոսներից լսվեց վագոնավարի ձայնը.

– Բարի գալուստ ÖBB railjet**, Վիեննա-Մյունխեն երթուղով...*

Գնացքը թափ էր հավաքում՝ կայծակնային արագությամբ ճեղքելով տարածությունն ու ժամանակը:

Կյանքն էլ այսպես մրրկասլաց ընթացք ունեցավ: Չնկատեց էլ, թե ինչպես գլորվեցին տարիներն ու տասնամյակները...

Պատուհանից նայում էր քաղաքի հեռացող պատկերներին: Իրար պիրկ գրկած խայտաբղետ տները սրընթաց հեռանում էին տիկին Ռիմայի տեսադաշտից ու վաղուց մոռացված հուշեր արթնացնում, հարազատ, հաճելի հուշեր:

Տների բաց պատուհաններից երբեմն անցողակի նշմար-

---

* ÖBB (գերմաներեն՝ *Österreichische Bundesbahnen*) – Ավստրիայի պետական երկաթուղային ընկերություն:

** Railjet – Ավստրիայի պետական երկաթուղային ընկերության գերարագ գնացքները:

վում էին արթնացող բնակիչների սփվերները: Անցյալի մոռացված կերպարներն իրար հաջորդելով հառնում էին հիշողության մեջ՝ նրան մտովի տեղափոխելով նախորդ դարի վաղեմի տասնամյակներն ու կենդանացնելով հեռավոր անցյալի խունացած պատկերները…

– Նուբա՛ր,– պատշգամբից պատշգամբ ձայնեց տիկին Սիրանուշը,– Նուբա՛ր, տվարոժնիկն* էղավ, կոֆեն վերցրու, արի:

Ստալինյան պողոտայի** 42-րդ շենքի 5-րդ մուտքի 4-րդ հարկի 3-սենյականոց կոմունալ*** բնակարանում երեք ընտանիք էր ապրում՝ 12 շունչ:

Միայն Ռիմիկենց սենյակում հինգ շունչ էր՝ գնացող-էկողն էլ չհաշված: Հյուրերն էլ, որ Ռիմիկենց տնից անպակաս էին, տասնյակներով էին հաշվվում:

Վանեցի տիկին Սիրանուշը՝ Ռիմիկի մայրը, հմուտ խոհարար էր: Շատ համեղ էր պատրաստում: Հրաշալի տոլմա էր եփում, քրջիկ, քաշովի, փոխինձ, բոզբաշ… Նրա տապակած կարտոֆիլն ուղղակի անմահական էր: Գրեթե ոչինչ չէր թափում: Տոլմայի կաղամբի մնացորդներից, օրինակ, էնպիսի համեղ շոգեխաշու էր պատրաստում, որ մատներդ էլ հետը կուտեիր:

Բարությունը, կամեցողությունն ու առատաձեռնությունը նրա արյան մեջ էին: Մորից ժառանգած հատուկ սովորություն

---

* Ռուսերեն творожное печенье բառակապակցությունից է, նշանակում է շոռային խորիզով թխվածք:

** Այժմ՝ Մաշտոցի պողոտա:

*** Կոմունալ բնակարան՝ կոմունալկա – բնակելի շենքի առանձնացված բնակարան, որում ապրում էր մի քանի ընտանիք: ԽՍՀՄ-ում բնակարանների մեծ մասը պետական էր և քաղաքացիներին տրվում էր անժամկետ օգտագործման:

ուներ՝ տանը միշտ ինչ-որ բան պահում էր հյուրերի համար: Այդ պատճառով տիկին Փառանձեմը սիրում էր ասել, որ տիկին Սիրանուշենց տունն առավոտից իրիկուն «պռախադնոյ դվոռ*» էր:

Բնակարանում լոգարան չկար, սանհանգույցն ու խոհանոցն ընդհանուր էին բոլոր երեք սենյակների համար:

Ինչ խոսք, կոմունալ բնակարանում նեղվածք էր: Բայց դե, դա ինչ կարևոր էր: Տեղները նեղ էր, բայց սրտները՝ լայն: Կարևորը՝ մարդու սիրտը լեն լինի...

Բնակարանի մյուս երկու սենյակներից մեկը զբաղեցնում էր սոցապի աշխատող Կառլեն հորեղբայրն իր մոր, կնոջ ու երկու որդիների հետ, մյուսն էլ՝ Արտավազդ հորեղբայրն իր երկրորդ կնոջ՝ Փառանձեմ մորաքրոջ հետ: Նրանք սիրում էին նարդի խաղալ, բայց ուստա** Արտավազդը ոչ միշտ էր ազնիվ խաղում, ու տիկին Փառանձեմն ամուսնուն անընդհատ նախատում էր ղալբություն*** անելու համար:

Դիմացի բնակարանում էլ որմնադիր Համբարձումն էր բնակվում կնոջ՝ տիկին Նուբարի ու երկու որդիների հետ...

– Հեսա էկա,– ի պատասխան հնչեց տիկին Նուբարի ձայնը:

Րոպեներ անց հարևաններն արդեն նստոտել էին կոմունալ բնակարանի լայնարձակ միջանցքում: Թխվածքի ախորժելի բույրը տարածվել էր չորս դին՝ առանձնապես գրգռելով շամշադինցի տիկին Փառանձեմի ախորժակը. նա թխվածքի նկատմամբ մի առանձին թուլություն ուներ:

---

* Проходной двор – ռուսերենից թարգմանաբար՝ միջանցիկ բակ: Փոխաբերական իմաստով՝ տեղ, ուր հեշտությամբ կարելի է մտնել, ապա՝ նաև նույնքան հեշտությամբ դուրս գալ:

** Ուստա – վարպետ (տե՛ս Աշոտ Մուրադի Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, ԵՊՀ, Երևան, 2009, էջ 1149):

*** Ղալբություն – խարդախություն (տե՛ս Հայոց լեզվի բարբառային բառարան, Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երևան, 2004, հատոր 3, էջ 346):